Tunes for Tavush

Բյուջե

Նպատակը

Ապահովել Դիլիջանի արվեստի պետական քոլեջի երիտասարդ սաներին անհրաժեշտ երաժշտական գործիքներով՝ սովորելու, ստեղծագործելու և բեմերում հանդես գալու համար:

Նկարագրություն

 Հայաստանի հյուսիսում անտառներով շրջապատված Դիլիջանը երկար տարիներ եղել է Տավուշի մարզի մշակութային և գեղարվեստական կյանքի կարևոր կենտրոններից մեկը: Այդ ավանդույթի առանցքում Դիլիջանի պետական արվեստի քոլեջն է՝ երաժշտական կրթության տարածաշրջանային կենտրոնը, որը սերունդներ շարունակ բացահայտում և զարգացնում է երիտասարդ տաղանդների ներուժը:

Հիմնադրվելով 1945 թվականին՝ որպես երաժշտական դպրոց, իսկ 1997 թվականին ստանալով քոլեջի կարգավիճակ՝ հաստատությունը երաժշտական կրթություն է ապահովում Դիլիջանի և հարակից համայնքների երեխաների ու երիտասարդների համար: Այսօր քոլեջում սովորում է շուրջ 250 ուսանող՝ նվիրված և փորձառու ուսուցիչների առաջնորդությամբ զարգացնելով իրենց հմտությունները գործիքային և վոկալ կատարողականության ոլորտներում:

ՀՕՖ-ը երկար տարիներ քոլեջի զարգացման հավատարիմ գործընկերն է: Վերջին տարիներին ՀՕՖ-ի աջակիցների շնորհիվ քոլեջի հնացած ենթակառուցվածքները վերածվել են ժամանակակից և ոգեշնչող կրթական միջավայրի: Կատարվել է նաև համերգասրահի վերանորոգում, իսկ քոլեջին տրամադրվել են տասնյակ երաժշտական գործիքներ՝ դաշնամուրներից և ջութակներից մինչև կլարնետներ, ֆլեյտաներ, շեփորներ, հարվածային գործիքներ, դուդուկներ և փողեր: Այս ներդրումները երիտասարդ տաղանդավոր երաժիշտներին հնարավորություն են տվել ունենալ անհրաժեշտ տարածք ու գործիքներ՝ սովորելու, բեմում հանդես գալու և իրենց երազանքներն իրագործելու համար:

Սակայն երաժշտական գործիքները հավերժ չեն ծառայում, իսկ զարգացող երաժշտական ծրագրի կարիքները շարունակաբար փոխվում են: Քոլեջի բազմաթիվ գործիքներ այժմ փոխարինման կամ արդիականացման կարիք ունեն, մինչդեռ ուսանողներին անհրաժեշտ է հասանելիություն ունենալ ավելի լայն տեսականիի և բարձրորակ գործիքների՝ անհատական դասերի, անսամբլների, փորձերի և համերգային ելույթների համար:

Օգնե՛ք, որ երաժշտությունը շարունակի հնչել Տավուշում:

Բյուջե

Անվանում	Քանակ	Արժեք	Ընդամենը
Էլեկտրանային դաշնամուր + աթոռ, Medeli DP250	1	420,000	420,000
Դաշնամուր, Petrof	1	420,000	420,000
Ջութակ 1, Soundsation VSVI 1/4	1	59,000	59,000
Ջութակ 2, Soundsation VSVI 2/4	2	61,000	122,000
Ջութակ 3, Soundsation VSVI 3/4	1	65,000	65,000
Կլարնետ, Soundsation CSL-10 Bb	1	135,000	135,000
Քանոն	1	400,000	400,000
Սաքսոֆոն	1	380,000	380,000

Ընդհանուր

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար = *365* ՀՀ դրամ

֏2,001,000